

**ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Ներածություն: Համաշխարհային բանկի աջակցությամբ ՀՀ-ում ընթանում են ակտիվորեն քննարկումներ հարկային վարչարարության բարեփոխումների և մաքսային մարմնի առաջիկա հինգ տարիների զարգացման ռազմավարության նախագծերում արտացոլված համակարգային բարեփոխումների ուղղությունները: Հոդվածի նպատակն է հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը և թվային տնտեսության առաջատար տեխնոլոգիաների հնարավորությունները ներկայացնել առաջարկություններ ՀՀ-ում հարկային վարչարարության բարելավման վերաբերյալ: Հետազոտության շրջանակներում հիմնավորվել են հարկային վարչարարության բարելավման ռազմավարական ուղղությունները, ՀՀ կառավարության կողմից նախանշված առաջնահերթություններին համահունչ մոտեցումները, հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների առավելագույն թվայնացմանը միտված աշխատանքները, հարկային վարչարարության ակտորոշիչ գնահատման գործիքի դերն ու նշանակությունը, ինչպես նաև ստվերային տնտեսության նվազեցման և տնտեսվարողների համար հավասար պայմանների ստեղծմանն ուղղված լուծումները: Ստացված հիմնական արդյունքները ցույց են տալիս, որ թվայնացումը և նորարարական լուծումների ներդրումը զգալիորեն կբարձրացնեն հարկային վարչարարության արդյունավետությունը, կնվազեցնեն ստվերային տնտեսությունը և կապահովեն տնտեսվարողների համար հավասար պայմաններ:

Հոդվածի հետազոտական խնդիրներն են՝

- ՀՀ հարկային վարչարարության ներկա վիճակի գնահատումը,
- թվային փոխակերպման գործընթացների և ՏՀԶԿ առաջարկությունների վերլուծությունը,
- ոլորտի թվայնացման ուղղությունների հիմնավորումը,
- նորարարական տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ առաջարկությունների մշակումը:

Կիրառված հիմնական գիտական մեթոդներից են հետահայաց վերլուծություն, համեմատական վերլուծություն, սինթեզ և կանխատեսում:

Գրականության վերլուծություն: Տեղեկատվական բազայի ընդլայնման և տարբեր աղբյուրներից ստացվող տեխնոլոգիական տվյալների կատարելագործման պայմաններում գործարարության վրա հարկային բեռի կայունության

ապահովման ֆիսկալ խնդիրների լուծման համար հարկային վարչարարության ներուժի սահմանման են անդրադարձել Լ.Ի. Գոնչարենկոն և Ս. Բոգաչևը¹:

Հարկային մարմինների կողմից ՌԴ -ում և աշխարհում իրականացվող հարկային վարչարարության արդյունավետության գնահատման գործիքների համեմատական վերլուծության հարցերի ու դրանց տարբերությունների բացահայտմանն է նվիրված Դ. Ի. Վասիլևի և Մ.Ն. Կաբանենկոյի ուսումնասիրությունները²: Իսկ ըստ Ս. Վ. Հարությունյանի, հարկային վարչարարության արդյունավետության գնահատականն, առաջին հերթին, կախված է հարկ վճարողներից համապատասխան օրենսդրությամբ սահմանված հարկատեսակները պետական և համայնքների բյուջեների հավաքագրման հետ³:

Ամփոփելով փաստենք, որ արդյունավետ հարկային վարչարարությունը, նպաստելով հարկեր վճարելու պատրաստականության նոր մշակույթի ձևավորմանը և հարկ վճարողների շրջանում օրինապահության մակարդակի բարձրացմանը, կապահովի հարկային ստվերի կրճատում և հարկային եկամուտների կայուն աճ⁴:

Վերլուծություն: Հետազոտության մեջ արծարծված խնդիրների ձևակերպման և լուծման համար տեսական հիմք են հանդիսացել հարկային վարչարարության բնագավառին վերաբերող հայկական և արտասահմանյան գրականությունը, առաջատար մասնագետների ուսումնասիրությունները, հարկային ոլորտը կարգավորող օրենսդրությունը և իրավական այլ աղբյուրներ: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ վիճակագրական կոմիտեի, ֆինանսների նախարարության, ՊԵԿ-ի հրապարակած տեղեկագրերը, հետազոտությունները, նյութերը և տվյալները: 2025 թվականի հուլիսին ՀՀ-ում արձանագրվել է շուրջ 18%-ով, իսկ՝ հունվար-հուլիսին շուրջ 15%-ով ավելի հարկային եկամուտներ՝ նախորդ տարվա համեմատ, ինչը համարվում է ոչ միայն տնտեսական ակտիվության, այլև վարչարարության գործիքների արդյունավետ կիրառման, ստվերի կրճատման ու հարկ վճարողների կարգապահության անհամեմատ բարձրացման արդյունք⁵:

¹ Гончаренко Л. И., Богачев С. В. Налоговое администрирование как важный фактор обеспечения улучшения собираемости налогов. Экономика. Налоги. Право. 2024;17(6):140-151. Doi: 10.26794/1999-849x-2024 17-6-140-151

² Васильев Д.И., Кабаненко М.Н. Отечественные и зарубежные инструменты оценки эффективности налогового администрирования // Креативная экономика. – 2023. – Том 17. – № 11. – С. 4371–4384. doi: 10.18334/ce.17.11.11937

³ Հարությունյան Ս. Վ., Հարկային քաղաքականության և հարկային վարչարարության կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2016, էջ 280:

⁴ Կ. Միքայելյան, Ա. Պետրոսյան -Հարկային վարչարարության արդյունավետության գնահատումը ՀՀ-ում Pan-Armenian Digital Library, <https://arar.sci.am/Content/294749/4.pdf>

⁵ ՊԵԿ ռազմավարական նախագծերի քննարկում՝ միջազգային գործընկերների մասնակցությամբ. տեղի է ունեցել երկօրյա աշխատաժողով, <https://www.src.am/am/getNews/1113>

Պետական եկամուտների կոմիտեում մեկնարկած բարեփոխումների շրջանակում՝ կոմիտեի նախաձեռնությամբ Արժույթի միջազգային հիմնադրամն ներկայումս իրականացնում է հարկային վարչարարության նոր գնահատում՝ հարկային վարչարարության ախտորոշիչ գործիքի կիրառմամբ. փորձագիտական խումբը դիտարկում է 2022-2024 թվականների ՊԵԿ գործունեությունը: ՀՀ-ում հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման միջազգային ստանդարտների կիրարկմանն ընդառաջ՝ մի շարք միջոցառումներ և նախաձեռնություններ են իրականացվել: Մասնավորապես, գործընթացի բարձր արդյունավետության ապահովման նպատակով ստեղծվել է աշխատանքային խումբ, որում ընդգրկված են ՀՀ ֆինանսների և արդարադատության նախարարությունների, ՀՀ Կենտրոնական բանկի և Պետական եկամուտների կոմիտեի աշխատակիցները: ՊԵԿ-ում հստակեցվել և կանոնակարգվել են տեղեկությունների փոխանակմամբ զբաղվող ստորաբաժանումների գործառույթները: Իրականացվել են նաև մի շարք օրենսդրական և ենթօրենսդրական կարգավորումներ:

Աղյուսակ 1.

Հարկային վարչարարության թվային փոխակերպման բազմամակարդակ հետևանքները⁶

Ազդեցության մակարդակը	Ուղղակի արդյունքները	Անուղղակի արդյունքները	Երկարաժամկետ արդյունքները
Հարկային մարմինները	Վերահսկողության արդյունավետության բարձրացում, ծախսերի նվազեցում	Վերլուծության որակի բարելավում, ռեսուրսների օպտիմալացում	Կազմակերպական մշակույթի վերափոխում
Հարկ վճարողները	Ընթացակարգերի պարզեցում, համապատասխանության ծախսերի նվազեցում	Թափանցիկության բարձրացում, ծառայության բարելավում	Հարկային համակարգի նկատմամբ վստահության աճ
Տնտեսությունն ամբողջությամբ	Հարկային եկամուտների ավելացում	Ներդրումային միջավայրի բարելավում	Թվային տնտեսության խթանում
Հասարակությունը	Հարկման արդարության բարձրացում	Հանրային ծառայությունների որակի աճ	Թվային հասարակության ձևավորում

Կարևոր փոփոխություններից է, որ միջազգային հարցումն այլևս հիմք է հանդիսանում պարզեցված ընթացակարգով դատարանի որոշում ստանալ՝ բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը հարկային մարմնին

⁶ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից սեփական դիտարկումների հիման վրա:

տրամադրելու նպատակով: Տեղեկությունների փոխանակման և թափանցիկության միջազգային ստանդարտի ներդրման գործընթացի վերաբերյալ ՏՀԶԿ-ի կողմից ներկայացված առաջարկները լրացնելու և կարգավորումները լավարկելու նպատակով առաջիկայում ևս նախատեսվում են մի շարք օրենսդրական նախաձեռնություններ իրականացնել⁷: Հարկ է նշել, որ թվայնացման ազդեցությունը հարկերի հավաքագրման վրա դրսևորվում է մի քանի հիմնական մեխանիզմների միջոցով՝

- հարկային հսկողության ճշգրտության բարձրացում ,
- մեծ քանակությամբ տվյալների ավտոմատացված մշակում,
- հարկումից խուսափելու հնարավորությունների կրճատում,
- բիզնես գործարքների վերջնահաշվարկային մոնիտորինգի համակարգերի ներդրման շնորհիվ, հարկային վարչարարության ծախսերի կրճատում, ինչը թույլ է տալիս վերաբաշխել ռեսուրսները վերահսկողության ավելի արդյունավետ ոլորտներում,
- բարեխիղճ հարկ վճարողների հետ փոխգործակցության որակի բարելավում, ինչը նպաստում է հարկային օրենսդրության կամավոր համապատասխանության մակարդակի բարձրացմանը միջոցով⁸:

Հարկային վարչարարության կազմակերպման գործընթացում արհեստական բանականության տեխնոլոգիաների կիրառումը որակապես նոր հնարավորություններ է բացում հարկումից խուսափելու բարդ սխեմաների բացահայտման համար, որոնք չեն կարող հայտնաբերվել վերահսկողության ավանդական մեթոդներով: AI համակարգերը կարող են վերլուծել տարբեր տվյալների միջև փոխհարաբերությունները, բացահայտել հարկ վճարողների վարքագծի թաքնված օրինաչափությունները և կանխատեսել հարկային օրենսդրության խախտումների հավանականությունը: Հարկային համապատասխանության վրա թվայնացման ազդեցության մեխանիզմները ներառում են հարկային մարմինների հետ փոխգործակցության ընթացակարգերի պարզեցում, հարկային օրենսդրության թափանցիկության բարձրացում, հարկային պարտավորությունների կատարման ծախսերի նվազեցում և տնտեսական գործունեության բոլոր մասնակիցների համար արդար մրցակցային պայմանների ստեղծում:

Հարկային մարմինների էլեկտրոնային ծառայությունները թույլ են տալիս հարկ վճարողներին իրականացնել գործարքների մեծ մասը հեռավար ռեժիմով, ինչը զգալիորեն խնայում է ժամանակը և ռեսուրսները: Հարկերի հաշվարկման և

⁷ Հայաստանի վարկանիշը մեծամասամբ համապատասխանում է ՏՀԶԿ հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման միջազգային ստանդարտին

<https://src.am/am/getNews/1062>

⁸ OECD (2022), Tax Administration 2022: Comparative Information on OECD and other Advanced and Emerging Economies, OECD Publishing, Paris, <https://doi.org/10.1787/1e797131-en>.

հաշվետվությունների ձևավորման ավտոմատացումը նվազեցնում է սխալների հավանականությունը և պարզեցնում հարկային պարտավորությունների կատարման գործընթացը:

Այսպիսով, հարկային վարչարարության թվային վերափոխումը իրենից ներկայացնում է համակարգային փոփոխությունների համապարփակ գործընթաց , որն ազդում է ոչ միայն հարկային վերահսկողության տեխնոլոգիական ասպեկտների, այլև պետության և հարկ վճարողների միջև փոխգործակցության հիմնարար սկզբունքների վրա:

Հարկային վարչարարության թվային փոխակերպման հաջողությունը որոշվում է տեխնոլոգիական, կազմակերպչական, կարգավորող և մշակութային փոփոխությունների համաժամանցմամբ, որոնք ապահովում են հարկային վարչարարության որակապես նոր մոդելի ձևավորումը, որը կենտրոնացած է հարկային հարաբերությունների բոլոր մասնակիցների համար առավելագույն արժեք ստեղծելու վրա: Թվայնացման հետագա զարգացման հեռանկարները կապված են արհեստական բանականության, բլոկչեյնի, իրերի ինտերնետի և քվանտային հաշվարկների առաջատար տեխնոլոգիաների ներդրման հետ, ինչը հնարավորություններ է բացում ապագայի հարկային վարչարարության լիովին ավտոմատացված և թափանցիկ համակարգ ստեղծելու համար⁹:

ՀՀ կառավարության գործունեության ծրագրով, ինչպես նաև Կառավարության այլ ռազմավարական փաստաթղթերով սահմանված՝ հարկային ու մաքսային վարչարարության բարելավման ուղենիշների իրագործման նպատակով ՀՀ կառավարության 2019 թվականի որոշմամբ հաստատվել է ՀՀ ՊԵԿ զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարական ծրագիրը, որում փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2020թ. և 2021թ. համապատասխան որոշումներով¹⁰:

Միջնաժամկետ հեռանկարում եկամուտների վարչարարության զարգացման առաջնահերթությունները կկենտրոնանան մի շարք հիմնարար ուղղությունների վրա: Հարկային ծառայության մասով նպատակն է ապահովել պետական բյուջեի կողմից հավաքագրվող հարկային եկամուտների կայուն և կանխատեսելի աճը հիմնված թվայնացված, բարձրորակ և taxpayer-բարեկամ ծառայությունների մատուցման վրա: Հարկային կարգապահության բարձրացումը կնպաստի ավելի հասցեական և հնարավորինս «անտեսանելի» վարչարարության իրագործմանը: ՊԵԿ-ի ռազմավարական տեսլականը միտված է ձևավորել թվային, արդյունավետ և վստահելի հարկային ու մաքսային

⁹ Филипович, А. А. Цифровая трансформация налогового администрирования: влияние на собираемость налогов, комплаенс и развитие экономики / А. А. Филипович // Вестник евразийской науки. — 2025. — Т

¹⁰ Հայաստանի Հանրապետության 2026-2028 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 5-ի N 741 - Ն որոշման Հավելված N 1 https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/GV2E-5155-6FD2-9EBF/741.pdf

կառույցներ, որոնք՝

1. իրականացնում են ոչ ինտենսիվ, սակայն արդյունավետ հարկային և մաքսային վերահսկողություն,

2. մատուցում են միջազգային չափանիշներին համապատասխան, բարձրորակ և մրցունակ ծառայություններ,

3. նորարարական տեխնոլոգիաների և կառավարման ժամանակակից մոդելների գործարկմամբ անընդհատ կատարելագործում են իրենց կարողություններն ու վարչարարության մեխանիզմները¹¹:

Միջնաժամկետում հարկային եկամուտները շարունակելու են բարելավել հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը. 2025 թվականին ակնկալվում է մոտ 0.7 տոկոսային կետի, 2026 թվականին՝ 0.5 տոկոսային կետի, իսկ հաջորդող տարիներին՝ շուրջ 0.2 տոկոսային կետի աճ: Հաշվարկներում ենթադրվել է, որ ցուցանիշի այս դինամիկան հնարավոր կլինի ապահովել գործող օրենսդրական հիմքերի, նախատեսվող վարչարարական միջոցառումների և բարենպաստ մակրոտնտեսական պայմանների համակցությամբ: Այս ենթադրությունների հիման վրա 2026–2028 թթ. հարկային եկամուտների աճի կանխատեսումները հետևյալն են.

- 2026 թ.՝ 2025 թ. սպասվող մակարդակից բարձր 279.0 մլրդ դրամ,
- 2027 թ.՝ 2026 թ. ծրագրային ցուցանիշից բարձր 271.2 մլրդ դրամ,
- 2028 թ.՝ 2027 թ. ծրագրային մակարդակից բարձր 297.1 մլրդ դրամ:

Այսպիսով, միջնաժամկետ հատվածում ակնկալվում է հարկային եկամուտների կայուն աճ, որն ապահովվելու է ինչպես բազայի ընդլայնման, այնպես էլ վարչարարության արդյունավետության բարձրացման հաշվին¹²:

Պետական եկամուտների կոմիտեի հարկային վարչարարության բարեփոխումների և մաքսային մարմնի առաջիկա հինգ տարիների զարգացման ռազմավարության նախագծերը գործարար գիտական շրջանակներում քննարկվում են հարկային և մաքսային համակարգերի զարգացման երկարաժամկետ հեռանկարի հստակեցման հարցերը՝ հիմնված ներկա իրավիճակի վերլուծության, ռազմավարական տեսլականի ձևակերպման, ինչպես նաև միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության վրա:

Նշենք, որ ՊԵԿ-ում ընթացող բարեփոխումների շրջանակում՝ կոմիտեի նախաձեռնությամբ Արժույթի միջազգային հիմնադրամը այս փուլում կիրառում է հարկային վարչարարության ախտորոշիչ գործիքը (Tax Administration Diagnostic Assessment Tool – TADAT)՝ իրականացնելու նոր գնահատում:

¹² Նույն տեղում:

¹³ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ 2026 – 2028, ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 5-ի N 741 - Ն որոշում, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/GV2E-5155-6FD2-9EBF/741.1.pdf

Փորձագիտական խումբը ուսումնասիրում է ՊԵԿ գործունեությունը՝ ընդգրկելով 2022–2024 թվականները¹³:

Հարկ է նշել, որ փորձագիտական խումբն, ընդհանուր առմամբ, բարձր է գնահատել վերջին տարիներին Հայաստանում հարկային քաղաքականության և վարչարարության բարելավման ուղղությամբ իրականացված աշխատանքները¹⁴:

Աղյուսակ 2.

Հարկային վարչարարության արդյունավետության գործակից,
մլրդ. ՀՀ դրամ¹⁵

N	Ցուցանիշ	2023	2024	2025	2026	2027
1	Փաստացի հարկային եկամուտներ և պետական տուրքեր (ներառյալ եկամտային հարկի վերադարձը)	2,273.9	2.548.0	2,866.8	3,210.4	3,579.4
2	Հարկային վարչարարության արդյունավետության գործակիցի համար ընտրված ծախսեր	26,9	29,5	33,3	33,3	33,4
3	Հարկային վարչարարության արդյունավետության գործակից, %	1.18	1.16	1.16	1.04	0.93

Հարկային եկամուտների աճը կանխատեսվում է բոլոր հիմնական հարկատեսակներով, ինչը պայմանավորված կլինի թե՛ հարկային բազաների ընդլայնմամբ, թե՛ օրենսդրական և վարչարարական բարեփոխումների

¹³ ԱՄՀ փորձագիտական խումբը բարձր է գնահատել վերջին տարիներին հարկային վարչարարության բարելավման ուղղությամբ իրականացված աշխատանքները <https://www.src.am/am/getNews/1053>

¹⁴ ՊԵԿ նախագահ Էդուարդ Հակոբյանը հանդիպել է Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագիտական խմբի ղեկավար Մայքլ Էնդրյու Հարդիի հետ <https://www.src.am/am/getNews/1033>

¹⁵ Տվյալների աղբյուրը Հարկային վարչարարության բարեփոխումների ռազմավարություն Երևան 2024թ. էջ 8, https://www.e-draft.am › files › project_file

ազդեցությամբ: 2025–2028 թթ. ընթացքում հարկային վարչարարության ներդրումը հարկեր/ՀՆԱ հարաբերակցության բարելավման մեջ գնահատվում է շուրջ 0.3 տոկոսային կետ, մինչդեռ հարկային քաղաքականության փոփոխությունները 2025–2026 թթ. ընթացքում ակնկալվում է, որ կընձեռեն միջինում մոտ 0.27 տոկոսային կետ դրական ազդեցություն¹⁶:

Հարկային վարչարարության արդյունավետության գործակիցը հաշվարկվում է որպես հարկային վարչարարության արդյունավետության գործակցի համար ընտրված ծախսեր ցուցանիշի հարաբերությունը հարկային եկամուտներ և պետական տուրք ցուցանիշին :

Այն աստիճանական նվազելով 2027թվականին կկազմի 0,93 կամ բարելավումը կկազմի շուրջ 21.2 տոկոս:

ՀՀ կառավարությունը հարկային քաղաքականության միջոցառումներով, հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման և ստվերային տնտեսության կրճատման ճանապարհով նախատեսում է միջնաժամկետ հորիզոնում ապահովել հարկեր/ՀՆԱ ցուցանիշի շարունակական աճ՝ 2026 թ. հարկեր/ՀՆԱ ցուցանիշը հասցնելով առնվազն 25 տոկոսի: Նշված թիրախին հասնելու ուղղություններ են նախատեսվել հարկային վարչարարության կատարելագործումը և դրա արդյունքում՝ հարկերի վճարման համապատասխանության բարելավումը, հարկման բազաների ընդլայնումը, այդ թվում՝ որոշ արտոնություններ կրճատելու արդյունքում, հարկային որոշ դրույքաչափերի կամ գործունեության առանձին տեսակների մասով հարկային բեռի բարձրացումը, հարկերի կամ պարտադիր վճարների թվաքանակի վերանայումը: Հարկային վարչարարության սկզբունքներն ու միջոցառումները իրենց հերթին սահմանվում են ՀՀ ՊԵԿ զարգացման և վարչարարության բարելավման ռազմավարական ծրագրով, որը պարբերաբար թարմացվում:

Եզրակացություններ: Վերջին տարիներին ՀՀ ՊԵԿ-ի կողմից իրականացվող բարեփոխումներն ուղղված են հարկային ու մաքսային վարչարարության պարզեցմանը, դրա արդյունավետության բարձրացմանը, իրավախախտումների կանխարգելմանը, ենթակառուցվածքների արդիականացմանը, հարկ վճարողներին թվային տեխնոլոգիաների վրա հիմնված սպասարկման ծառայությունների տրամադրմանը, հարկ վճարող-ՊԵԿ համագործակցության և վստահության ամրապնդմանը՝ նպատակ ունենալով հասարակության մեջ արմատավորել կամավոր հարկային կարգապահությունը:

ՀՀ ՊԵԿ-ի ռազմավարական ծրագրերի մշակման ներկա փուլում կարևորելով համակարգում իրականացվող բարեփոխումները, անհրաժեշտ է միջազգային առաջավոր փորձի հետ համադրելու արդյունքում վեր հանել համակարգի ձեռքբերումներն ու բացթողումները և նախանշել զարգացման հետագա ուղղությունները: Թվային փոխակերպման հաջողությունը որոշվում է

¹⁶ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ 2026 – 2028, էջ 48ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 5-ի N 741 - Ն որոշում, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/GV2E-5155-6FD2-9EBF/741.1.pdf

տեխնոլոգիական, կազմակերպչական, կարգավորող և մշակութային փոփոխությունների համաժամեցմամբ, որոնք ապահովում են հարկային վարչարարության որակապես նոր մոդելի ձևավորումը, որը կենտրոնացած է հարկային հարաբերությունների բոլոր մասնակիցների համար առավելագույն արժեք ստեղծելու վրա: Թվայնացման հետագա զարգացման հեռանկարները կապված են արհեստական ինտելեկտի, բլոկչեյնի, իրերի ինտերնետի և քվանտային հաշվարկների առաջատար տեխնոլոգիաների ներդրման հետ, ինչը հնարավորություններ կբացի ապագայի հարկային վարչարարության լիովին ավտոմատացված և թափանցիկ համակարգ ստեղծելու համար: Հիմնվելով ոլորտում իրականացվող վարչարարության յուրաքանչյուր ուղղության նախնական գնահատականների վրա, անհրաժեշտ է հաշվի առնել ՊԵԿ-ի գործունեության թափանցիկության և հանրային վստահության ամրապնդման կարևորությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Гончаренко Л. И., Богачев С. В. Налоговое администрирование как важный фактор обеспечения улучшения собираемости налогов. Экономика. Налоги. Право. 2024;17(6):140-151. Doi: 10.26794/1999-849x-2024 17-6-140-151
2. Васильев Д.И., Кабаненко М.Н. Отечественные и зарубежные инструменты оценки эффективности налогового администрирования // Креативная экономика. – 2023. – Том 17. – № 11. – С. 4371–4384. doi: 10.18334/ce.17.11.11937
3. Հարությունյան Տ. Վ., Հարկային քաղաքականության և հարկային վարչարարության կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2016, էջ 280 .
4. OECD (2022), Tax Administration 2022: Comparative Information on OECD and other Advanced and Emerging Economies, OECD Publishing, Paris, <https://doi.org/10.1787/1e797131-en>.
5. Կ. Միքայելյան , Ա. Պետրոսյան -Հարկային վարչարարության արդյունավետության գնահատումը ՀՀ-ում Pan-Armenian Digital Library, <https://arar.sci.am/Content/294749/4.pdf>
6. ՊԵԿ ռազմավարական նախագծերի քննարկում՝ միջազգային գործընկերների մասնակցությամբ. տեղի է ունեցել երկօրյա աշխատաժողով , <https://www.src.am/am/getNews/1113>
7. Հայաստանի վարկանիշը մեծամասամբ համապատասխանում է ՏՀԶԿ հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման միջազգային ստանդարտին, <https://src.am/am/getNews/1062>
8. Հայաստանի Հանրապետության 2026-2028 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 5-ի N 741 - Ն որոշման Հավելված N

- 1https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/GV2E-5155-6FD2-9EBF/741.pdf
9. ՊԵԿ ռազմավարական նախագծերի քննարկում՝ միջազգային գործընկերների մասնակցությամբ. տեղի է ունեցել երկօրյա աշխատաժողով <https://www.src.am/am/getNews/1113>
 10. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում 5 հունիսի 2025 թվականի N 741 - Ն Հայաստանի Հանրապետության 2026-2028 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին Հավելված N 1 ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 5-ի N 741 - Ն որոշման էջ 48 <https://www.e-gov.am/gov-decrees/item/44683/>
 11. Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք Հարկային վարչարարության բարեփոխումների ռազմավարություն Երևան 2024թ. էջ 8, https://www.e-draft.am › files › project_file
 12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ 2026 – 2028, ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 5-ի N 741 - Ն որոշում, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/GV2E-5155-6FD2-9EBF/741.1.pdf
 13. ԱՄՀ փորձագիտական խումբը բարձր է գնահատել վերջին տարիներին հարկային վարչարարության բարելավման ուղղությամբ իրականացված աշխատանքները, <https://www.src.am/am/getNews/1053>
 14. ՊԵԿ նախագահ Էդուարդ Հակոբյանը հանդիպել է Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագիտական խմբի ղեկավար Մայքլ Էնդրյու Հարդիի հետ <https://www.src.am/am/getNews/1033>
 15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐ 2026 – 2028, էջ 48. ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 5-ի N 741 - Ն որոշում, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/GV2E-5155-6FD2-9EBF/741.1.pdf
 16. Հարկային վարչարարության բարեփոխումների ռազմավարություն Երևան 2024թ. էջ 8, https://www.e-draft.am › files › project_file
 17. Филипович, А. А. Цифровая трансформация налогового администрирования: влияние на собираемость налогов, комплаенс и развитие экономики / А. А. Филипович // Вестник евразийской науки. — 2025. — Т. 17. — № 4. — URL: <https://esj.today/PDF/52FAVN425.pdf>.

**ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է ՀՀ հարկային վարչարարության ռազմավարության տեսլականի ձևավորմանը և հարկային վարչարարության թվային փոխակերպման ռազմավարական ուղղությունների ուսումնասիրությանը:

Հարկային կարգավորման համակարգը հանդիսանում է ազգային տնտեսական անվտանգության ապահովման հիմնական գործիքներից մեկը, իսկ թվայնացումը և նոր տեխնոլոգիաների ներդրումը նպաստում են վարչարարության թափանցիկության, կանխատեսելիության և հանրային վստահության բարձրացմանը: Այս կարևոր հանգամանքներն էլ պայմանավորում են հետագոտական թեմայի արդիականությունը:

Հոդվածի նպատակն է հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը և թվային տնտեսության առաջատար տեխնոլոգիաների հնարավորությունները ուղղված հարկային վարչարարության կատարելագործմանը, հետագոտական : Հիմնական հետագոտական խնդիրներ ունենալով,

- ՀՀ հարկային վարչարարության ներկա վիճակի գնահատումը,
- թվային փոխակերպման գործընթացների և ՏՀԶԿ առաջարկությունների վերլուծությունը,
- թվայնացման դրական ու բացասական կողմերի գնահատումը,
- նորարարական տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ առաջարկությունների մշակումը:

Հոդվածի շրջանակում դիտարկվում են հարկային վարչարարության թվային գործիքները, մասնավորապես էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության զարգացումը, բլոկչեյն տեխնոլոգիայի օգտագործման հնարավորությունները և խելացի պայմանագրերի կիրառումը հարկերի հաշվարկման ու վճարման գործընթացների ավտոմատացման համար: Հետագոտության շրջանակներում հիմնավորվել են հարկային վարչարարության բարելավման ռազմավարական ուղղությունները, ՀՀ կառավարության կողմից նախանշված առաջնահերթություններին համահունչ մոտեցումները, հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների առավելագույն թվայնացմանը միտված աշխատանքները, հարկային վարչարարության ավտորոշիչ գնահատման գործիքի դերն ու նշանակությունը, ինչպես նաև ստվերային տնտեսության նվազեցման և տնտեսվարողների համար հավասար պայմանների ստեղծմանն ուղղված լուծումները: Ստացված հիմնական արդյունքները ցույց են տալիս, որ թվայնացումը և նորարարական լուծումների ներդրումը զգալիորեն կբարձրացնեն հարկային վարչարարության արդյունավետությունը, կնվազեցնեն

ստվերային տնտեսությունը և կապահովեն տնտեսվարողների համար հավասար պայմաններ:

Բանալի բառեր: հարկային վարչարարություն, թվայնացում, հարկային խթաններ, սմարթ պայմանագրեր, բոկչեյն, հարկային կարգավորում, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն

СОВРЕМЕННЫЕ НАПРАВЛЕНИЯ СОВЕРШЕНСТВОВАНИЯ СТРАТЕГИИ НАЛОГОВОГО АДМИНИСТРИРОВАНИЯ В РА

КАРЕН НЕРСИСЯН

Аннотация

Статья посвящена формированию стратегического видения налогового администрирования в Республике Армения и изучению стратегических направлений его цифровой трансформации. Система налогового регулирования является одним из главных инструментов обеспечения национальной экономической безопасности, а цифровизация и внедрение новых технологий способствуют повышению прозрачности, предсказуемости и доверия населения к администрации. Эти важные обстоятельства определяют актуальность темы исследования.

Цель статьи - разработка предложений по совершенствованию налогового администрирования в РА с учетом международного опыта и возможностей передовых технологий цифровой экономики.

Основные исследовательские задачи:

- Оценка текущего состояния налогового администрирования Республики Армения,
- Анализ процессов цифровой трансформации и рекомендаций ОЭСР,
- Оценка положительных и отрицательных аспектов цифровизации,
- Разработка рекомендаций по применению инновационных технологий.

В статье рассматриваются цифровые инструменты налогового администрирования, в частности, развитие электронного документооборота, возможности использования технологии блокчейн и применение смарт-контрактов для автоматизации процессов расчета и уплаты налогов.

В результате исследования обоснованы стратегические направления повышения эффективности налогового администрирования, выработаны подходы, соответствующие приоритетам Правительства РА, подчеркнута важность максимальной цифровизации налоговых услуг, а также предложены решения, направленные на сокращение теневой экономики и обеспечение равных условий для субъектов хозяйствования.

Основные выводы показывают, что цифровизация и внедрение инновационных решений значительно повысят эффективность налогового

администрирования, сократят теневую экономику и обеспечат равные условия для экономических субъектов.

Ключевые слова: налоговое администрирование, цифровизация, налоговые стимулы, смарт-контракты, блокчейн, налоговое регулирование, электронный документооборот

ON IMPROVING THE TAX ADMINISTRATION STRATEGY

KAREN NERSISYAN

Abstract

This article is devoted to the formulation of a strategic vision for tax administration in the Republic of Armenia and to the examination of the key strategic directions of its digital transformation. The tax regulation system is one of the core instruments for ensuring national economic security, while digitalization and the adoption of advanced technologies contribute to greater transparency, predictability, and public trust in tax administration. These considerations underscore the relevance and timeliness of the research topic.

The aim of the study is to explore pathways for improving tax administration by taking into account international best practices and the potential of leading digital economy technologies. The main research objectives include:

- assessing the current state of tax administration in the Republic of Armenia,
- analyzing digital transformation processes and OECD recommendations,
- evaluating the advantages and potential risks of digitalization,
- developing proposals for the application of innovative technologies.

Within the scope of the article, digital tools of tax administration are examined, with particular emphasis on the development of electronic document management, the potential use of blockchain technology, and the application of smart contracts to automate tax calculation and payment processes.

The study substantiates strategic directions for improving tax administration, aligned with the priorities set by the Government of the Republic of Armenia, including approaches aimed at the maximum digitalization of taxpayer services, the role and significance of diagnostic assessment tools in tax administration, and solutions focused on reducing the shadow economy and ensuring a level playing field for economic entities. The main findings indicate that digitalization and the introduction of innovative solutions can significantly enhance the effectiveness of tax administration, reduce the size of the shadow economy, and ensure equal conditions for businesses.

Keywords: tax administration, digitalization, tax incentives, smart contracts, blockchain, tax regulation, electronic document management